

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՐԿ

Տարեկան գինը 10 բուրլ, կէս տարեկանը 6 բուրլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք զիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Марка»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Ցայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՐՈՒԻՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Երևանից:
Նամակ Շուշուց: Նամակ խմբագրին: Ներքին լուս-
նային: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Արտաքին լուս-
նային: ՀԱՅԱՍՏԱՆԻՆ: ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:
ԲՈՎԱՆԳԱՎՈՐՈՒՄ: Նամակ Թիֆլիսից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

Մարտի 21-ին

Ամսոյ 13-ին Գալիանեան օր. ուսումնարանի
դասիչներ, Երևանի քաղաքային բժիշկ Լևոն Տիգ-
րանյանը մի հրապարակական դասախօսութիւն
կատարեց «Ժառանգական հիւանդութիւններ» մա-
տնի: Գասախօսութիւնը առհասարակ շատ հետա-
քրքիր և յայտնի անցաւ:

Գ. դասախօսի դիտարկութիւնն էր հասկացնել
հասարակութեան, որ ժառանգութիւնը՝ միայն
հասարակական է, այն է՝ ստացվածները, հարստու-
թեան, տոհմական ազնւութեան ժառանգութիւն-
ներ, որոնց համար՝ ծնողները ամեն ներքին և
աննրբին միջոցներով զիմում են իրանց ժառանգ-
ներին մի բան յետ դնելու համար, կամ իրանց
անձը դժբաղդ են համարում այն ծնողներ, որոնք
ազգատութիւնից, պարտքերից դատ ունին չեն կա-
տարում թողնել ժառանգներին: Կան բնական
ամենամեծ բարեքներ և չարեքներ ժառանգու-
թիւններ, որ ծնողները, մեղանում, մեծ մասամբ,
անգիտակցաբար, ակամայից, պատահմամբ, թող-
նում են իրանց ժառանգներին բոլորովին անբաղ-
դացիկով կամ բաղդաւորացիկով նրանց:

Ամենից առաջ պ. դասախօսը հաստատելու
համար, որ ընտելեան մէջ կան բնական ժառան-
գութեան օրէնքներ, բացատրել օրինակների փա-
տեղ առաջ բերեց, սկսելով մարմնի արտաքին
ձևից, ինչպէս մորթի, մաշկի, գոյնի, կերպարան-
քի, մարմնի կազմակերպութեան նմանութիւններ:
Յետոյ բաժանեց այդ օրէնքների ձևերը. ռոգիկ
ժառանգութիւն, փոխադարձ ժառանգութիւն,
կոլեկտիվ ժառանգութիւն, ֆիզիոլոգիական գոր-

ծողութիւնների ժառանգութիւն. կամքի, կրքերի
և վերջացրեց հիւանդութիւնների ժառանգութե-
նով, մասնաւորապէս խօսելով բարակացաւ և
վիսերական ցուր (սифилис) վրա:

Շատ հետաքրքիր և խորհրդաւոր էր այն կէտը՝
երբ պ. դասախօսը նկարագրում էր, թէ ինչպէս
կրքերի, շահախորժեան (ամուսնական նկատ-
մամբ) և սոցիալական պատճառներով, մի անձի
կամ ընտանիք կազմող մեղաց ժառանգութիւնը
ծանրանում է ամբողջ ընտանիքի վրա և ընտա-
նիքներից տարածվում է ամբողջ հասարակութիւն-
ներին մէջ: Պ. Տիգրանյանը օտար երկրների թէ
զեւական և թէ քաղաքային հասարակութիւննե-
րից օրինակ բերեց, որոնք զիմում վարակված
են, սկսած ծերերից մինչև նորածին մանուկներ:

Այսպիսի կարևոր և առողջապահական դասախօ-
սութեան, որի միայն բովանդակութեան ուրվա-
գիծը ցոյց տուինք, պակաս էին երևանցի ունեւ-
որները: Գալիանեան օրիորդաց ուսումնարանի
փոքրիկ դասիչը գրեթէ դատարկ էր:—Ուր, և
ինչպէս էին դառնում պատուելի հասարակութեան
անդամներ:

Մեր հասարակութիւնը մինչև այժմ էլ դեռ կա-
տարեալ երկնայութեան մէջ է գտնուում: Երբ քա-
ղաքին այցելում է մի ցիւրի, ձեռնածու, հասարա-
կութիւնը ողջական ցնծութիւնով է դիմաւորում.
դուստրանալ է ուղում: Նա չէ սիրում իր յան-
ցանքների, անբարոյակամութիւնների, մեղքերի
վրա ուշ դարձնել:

Գասախօսութիւնից անմիջապէս զինի, մտանք
նոր բացված «Եւրօպա» ամսուհի հիւանդացի, ուր
Թիֆլիսից առաջին անգամ երևանցի ընծայ էին
բերել դուստրանների (арфьянки) մի խումբ: Այնտեղ
էին ամենքը: Բոլոր նստարանները, սեղանները բռն-
ված էին: Երիտասարդները հողի էին տալիս դու-
ստրանների կողքին տեղ ունենալուն: Տեղ ունեցող-
ները իրանց գոհ և երջանիկ էին համարում: Նա-
խանայութեան և զինու ողու ազդեցութե-
նից յառաջ էին գալիս ընդհարումներ՝ ուշ մնա-
ցած յաճախորդները տեղ չը գտնելով, ցատած
սրտով յետ էին դառնում: Հիւանդացի տիւրը և
բնակիչ նկարած էր ազգայն անձկութիւն, և
բնի նա հարում էր, թէ ինչու դասիչը այնքան

մեծ էր, որ ամբողջ Երևանը կարողանար նստա-
մէջ դնել:

Այդ երեկոյ մենք միանգամից տեսանք երկու
հակադասութիւններ: Մէկում պ. Լեվիտայ, իր վաս-
տակի համար, հրապարակում էր երևանցի դէպի
արքեպիսկոպիտ և շուշուի Միսակով: Լեւոն
Տիգրանյանը հրապարակում էր հասարակութեան ըս-
տախառնալու, զգուշ կենալով անբարոյականու-
թիւնների և մեղքերի վարակումից և նրանց մարդ-
կային ցեղը ազակամող ժառանգութիւնից:

Պ. Լ. Տիգրանյանի այնչափ դժուարութիւնով
պատրաստած դասախօսութեանը, որ տարին մի
անգամ հաղու թէ լինի, և չափազանց արժան
մուտք ունէր, լսող չը կար: Իսկ պ. Լեվիտայի
շատ դիւրութեամբ բացած դուստրանցում, որ ա-
մեն օր բաց է, յաճախորդների բազմութիւնից
տեղ չը կար:

Մարդիկ եթէ որ աւելի հակամիտ են դուրսի-
լու, ինչ կարող է անել մի Լևոն Տիգրանյան:

Մակայն միթէ Լևոն Տիգրանյանը միայն է Ե-
րևանում: Ինքն ըստ ինքեան բարձրանում է հայոց.
միթէ նրա ուսանողական նստարանի ընկերներ,
որի վրա սովորութիւն է դարձել միշտ հասարա-
կական կենցաղավարութեան բարօրութիւնը միայն
երազելով անցկացնել, չեն համարում նրան: Ե-
րևանում կան թէ տեղացի և թէ եկուր բարձրա-
գոյն կրթութիւն ստացած շատ անձինքներ, նոյն-
քան էլ, որոնք թէ և համալսարան չեն աւարտել,
բայց նրանցից պակաս չեն զարգացումով: Կրտսեր
են կազմում քաղաքի առաջնակարգ դասը, ինտե-
լիգենցիան: Բայց այդ բարձրութեան մէջ Լևոն
Տիգրանյանը մի բացառութիւն է: Նա խմբա-
գրում է «Առողջապահական թերթ», նա հիմնել
և պահպանում է մարդկային. նա միայն բացել է
անհայտ փոքրիկ հայերէն գրքերի ընթերցարան,
որը տարեկան 3000 ընթերցող ունի: Նա տալիս
է ձրի դասեր, նա միայն է որ Երևանում հրապա-
րակական դասախօսութիւններ է տալիս և բացի
պրանից նա Երևանի քաղաքային բժիշկն է: Երբ
ինտելլիգենցիային յորդորում մեղադրում են, թէ
ինչի նա ոչինչ չէ անում, ոչ մի բանի չէ մաս-
նակցում, «մենք ամենինքն ժամանակ չունենք»,
մենք սաստիկ ծանրաբեռնած զբաղված ենք: Նա-

մալսարանական եղանակով պատասխանում են.
բայց դոցա ծանր զբաղմունքները չեն արգելում
մինչև լսյա նստել թուղթ խաղալու, կամ մի տեղ
ժողոված դասարկարանութեամբ անցկացնել:

Երևանի ուսուցչ բարձր դասակարգը տարին մի
քանի անգամ ներկայացումներ է տալիս բարե-
գործական նպատակով. հայերի նոյն դասակարգ,
որ նրանցից սովորած՝ շարանիս գինին կոնծում
է, թուղթ խաղում է, ալա մօղ և ալա շիկ
ապրում է, բայց բարեգործական նպատակով ներ-
կայացումներ տալը չը սովորեց. երևի նա իր
բարձրագոյն անձնաւորութիւնը չէ կամենում ստո-
րացնել մինչև այդ տեսակ «չնչին բաների» առ-
տին: Մակայն երկուսու ուսումնարանները մեծ
կարօտութեան մէջ են: Հոգաբարձութիւնից էլ
մի բարեպաշտօն տիկին, բարի օրինակ ցոյց տա-
լու համար, իր դստերը չէ ուղարկում հայոց ու-
սումնարան, բայց միանգամայն և իր չը հաւա-
նած ուսումնարանի հոգաբարձական պաշտօնը
չարժեանքում է: Գալիանեան օր. ուսումնարանի
տեսչուհին նոյն ուսումնարանի դրամական ճգնա-
ժամին օգնելու դիտարկութեամբ, խնդրեց երիտա-
սարդներին մի քանի դասախօսութիւններ կարդալ:
Լսիլ ընթերցող. երկու ուսու երիտասարդներ յան-
ձնեցին առին հայոց ուսումնարանի օգտին ներդո-
ւելու քաջել. հայ երիտասարդներից ոչ ոք չը բա-
րեհաճեց իր «աղիւս ճաշակի» դէմ մեղանշել:

Զարմանալի տիպ է ներկայացնում մեր բարձր
կրթութիւն ստացած դասակարգը: Ուսանողութեան
միջոցին նա միշտ առաջինն է հանդիսացել բո-
լոր բարենպաստակ դործերում, մինչև անգամ ազ-
գային դանձարանում մի լուսնա ցցելու համար, նա
առաջին օրինակն է տուել, իր օրական ապրուստն
սպառելով: Երբ համալսարանական աշխատու-
թիւններ վերջանում են և համում են հասարա-
կութեան մէջ դործելու օրեր, ամեն բան փոխ-
վում է. յայտնվում է հակակրթութիւն, արհամար-
հանք, զրուանք, մեռելի անտարբերութիւն դէպի
հասարակական գործերը. ժողովրդի ազգաւորութիւ-
նից և կուլիտ ճաշակից, խոյս են տալիս ինչպէս
մի հրէշից, դրանից առաջ է գալիս զայլի շարա-
կան, զրկած՝ չափաւոր ուսանողից՝ ներկայ ուսա-
նողին, ներկայ ուսանողից՝ նախկին ուսանողին:

ԲՈՎԱՆԳԱՎՈՐՈՒՄ

ՆԱՄԱԿ ԹԻՖԻՔԻԱՅԻՑ

Կարին, մարտի 19-ին 83

Երկու տարիէ հետէ ձեր վանայ թղթակցիցը
բարձր թէ անյարմար առիթ չի փախցնել եր-
բք պատրելու հասարակաց գաղափարը Սրբանձ-
նանց վրայ, հրատարակելով «Մշակից» մէջ թէ
Սրբանձնանց Գարեգին վարդապետը մասնիչ
է ազգին, սպանել է հայոց խնդրոյն, աղգակոր-
ծան խռովութեանց մասունք է Գիւրպալեթի, վան, Սրբ-
անձն: Բաղէ և այլն և այլն: Այս անգամ իմ
պատրաստակով աստ մանրամասնու-
թեան թէ ինչ եղած են այդ վարդապետին գործու-
թեան արդիւնքներն այդ տեղերում, և թէ
պաշտօն գնահատուած են աստիք Կ. Պոլսոյ ս.
կոթողարքէն, Կենտրոնական վարչութիւնէն և
Երևանի-Հայրիկէն, և ոչ ալ թէ ինչ պատճառ-
ներ յառաջ կուգան այդ գրադարութիւնները եր-
բք թէ: Այլ «Մշակից» պատուարժան խմբա-
գրութիւնէն խնդրելով, որ եթէ յարմար կը դատի,
թէ իր փեթակէն այս նիւթին արտաբերել պա-
տուէր, և կանցնեմ ներկայ տարւոյս փետրուար
թուականաւ № 20 «Մշակից» մէջ «Շաւար»
պատգանգութեամբ հրատարակել վանայ թղթակ-
ցութեան, որ Կարնոյ եղբուկեանց վրայ շատ մը
տալ և սխալ տեղեկութիւններ տալով՝ ի մէջ այ-
լոց կը յաւելու թէ—մասնիչներու մէջ կը յի-
շուրդ նաւ պ. Միքայէլ Սրբանձնանց, վանեցի

և զբայր Սրբանձնանց Գարեգին վարդապետի:—
վան նստելով Կարնոյ մէջ կատարուած մուկ և
ջրջիմ գործի վրայ գրելուն, առանց կատարեալ և
ստույգ տեղեկութիւն ունենալու, մեք վանեցիքս
կասեմք «Սրբաք նստել, վարաք հաշիւ» կամ ըստ
կարնեցոց «Կան նստել, մուտուրկան կը հաշիւ»:
Ստույգ է թէ Կարնոյ հրապարակին վրայ Միքա-
յէլ անուն մը պատի, որ ոչ թէ մասնիչ մի է,
ալ ինքն իսկ մասնակ և բնաւարկեալ, որ իր
անտուկուն բնաւորութեամբ չը կրնար լով տուկա-
ստանացուր զնոյնին խժոժական տանջանաց,
կրտսէ թէ ստիպուէր է քանի մը խոստովանու-
թիւններ ընել, և որոց հետեանաց դառնութիւնը
խեղճ ինքն միայն պիտի քաշէ գուցէ: Այդ ան-
ձը Միքայէլ Մանուկեան է, և ոչ թէ Միքայէլ
Սրբանձնանց, ստիպեցի և ոչ թէ վանեցի.
և զբայր կօշկակար Գիւրպի Մանուկեան, և ոչ եղ-
բայր Գարեգին վարդապետի Սրբանձնանց,
զճաղիչ նկարիչ և փորագրիչ Ի Կարնոյ, և ոչ
թարգման ուսուցչ հիւպատոսարանի Ի վան: Պ.
յօղածաղիկը օգուտ քաղելով իմ ալ անուանս
Միքայէլ լինելէն, մեք հետ ունեցած անձնական
հաշիւներուն մէջ կուրանալով ուղեր է մէկ մրով
միտուել երկու եղբայրներս, առանց, սակայն, ի
միտ բերելու թէ բոլոր ազգը կը ձանաչէ Գարե-
գին վարդապետն իր ազգօգուտ գործերով, և ամ-
բողջ կարնեցին վաղուց ի վեր գնահատած է զիս,
և այսօր էլ կը վկայէ թէ այդ տխուր յայտնու-
թիւններէն հաղու քանի մը օր յառաջ հասած
էի և ի Կարնոյ, ուսկի հեռացած էի երեք տարիէ
յետէ, և կրնում ինձ վրայ խրիման Հայրիկի
պաշտպանեալ—սան և պ. Կատարական թարգ-

ման տիտղոսները՝ գուցէ ևս ինքս էլ ստիպուելի
համարել այդ տանջանաց տխուր սեմը, եթէ
թիւրք կառավարութիւնը աչօք բացօք չը տես-
նէր աւելի արտաքին քան ներքին յայտնի պաշտ-
պանութեանց բարձր հովանի մը տարածուած
վրաս:

Գալով վանայ վարածս պաշտօնին մասին
զրուածոց անձնական և պաշտօնական նկատու-
թեան վանեցիներէ բնաւորապէս այսքան միայն կարող
եմ ըսել «Թէ անարժան գործերի համար վառու-
ած» պաշտօնէի մը ձեռք իր պաշտօնավարու-
թեան վանեցիութեան չի գտնուի. և եթէ երեք
դարձած եմ թարգման լինելէ, անմիջապէս կո-
չված եմ նորին վանութեան Կատարական պե-
տէն մի ուրիշ աւելի կարեւոր գործի մը կատար-
ման, որմէ թերեւ օր մը ազգս ևս օգտի, այն-
պէս որ կարող եմ պաշտօնս և կան վառ և րա-
կան ու թէ և մը յայտնել թէ 1879 յուլիս 1-ին
Երբողմէն Կատարական պեյին հետ միմիանս
օրին մինչև 1882 օգոստոս 15 զիւրեւան ժամը
3, որ արդէն ձի նստած եմ Երբողմ փոխադրե-
լու ընտանիքս և այնտեղ երեսի վրայ մնացած
անձնական գործերս կարգադրելու, ևս եղել եմ
միշտ հիւպատոսարանի գործոց մէջ Կատարական
պեյի մօտ անընդհատաբար ստանալով ուսմանե-
րու, մի մասն զեռ քիչ առաջ ի Կարնոյ: Ասով
ինքնին կը հերքուի արդէն այն գրուածքն ևս իբր
թէ շանգործ մնալով տեղական կառավարու-
թեան Գուռը պաշտօն մը ձեռք բերելու յուսով
արել եմ մի մասնութիւն վանայ մէջ, մասա-
ւանդ թէ հազար և մէկ պատճառներ կային, որ
եթէ անգործ իսկ լինէի, թիւրք կառավարութիւ-

նը վատահոլեամբ չէր կարող նայել իմ անձին
վրայ, որպէս զի որ և է պաշտօն մի յանձնել
ինձ: Իսկ չայն փառաւոր ծնեւոր, դոր կը յիշէ պ.
Շաւարը, կերած եմ ոչ թէ հայրենասէր հայ երի-
տասարդներէ, ալ երեք թիւրք զինուորներէ, որոց
հանդիպեցայ զիւր մը, և որք զինուորական և
զիւրեւան մթութեան պատճառաւ չէին կրցած զա-
նազանել ուսական գլխարկը, զոր կը կրէի, վար-
դապետական գլխարկէն: Ոչինչ նուազ կարեւոր
կը համարեմ յայտնել նոյնպէս թէ սխալ է ձեր պ.
յօղածաղիկն ցոյց տուած 300 թիւրք բնաւարկեցոյ
որք 62-էն անդին չեն անցած, և որոցմէ 5 հողի մի-
այն եղած են. սուտ է թէ «աղալին առաջնորդարա-
նը և թղթատուան հակողութեան կենթարկուած են
եղեր» . լիովին անհիմն է թէ «Վանաւարան վար-
ժարանը խուզարկուել է» . անտուկի վալի անկումն
ենթադրելն իսկ: Գնահատական աւելի հաստա-
տուեցաւ: Իմ սրտագին հնորակալութիւնս և ա-
մենախորին երախտագիտութիւնս կը պարտիմ
յայտնել ն ուրիշ վսեմ մօտ թէ ևս Կատարա-
րակ ան պէյին, որ այս առթիւ ցաւակցելով
ինձ, ըստ իմ խնդրանց բարեհաճեցաւ զրկել ինձ,
պաշտօնական կնիքով վաւերացեալ մի երկրորդ և
մասնաւոր վկայագիր, ի ցրումն իմ պաշտօնէ զա-
ղարկու մասին թշնամեաց տարածած չարախօ-
սութեանց, սոյն վկայագրոյն պատճենն է հետե-
ւեալը.

«Պ. Միքայէլ Սրբանձնանց խնդրած
լինելով կը տամ ներկայ վկայագիրը, որով նրա
պաշտօնավարութիւնը զարգրելուն նկատմամբ
լրացրաց մեջ հրատարակեալ տեղեկութեանց բո-
լորովին սխալ և սուտ լինելն յայտնի կը լինի,

դրանց պապի անունով չը թող տալ որ քաղաքական ամուսնութիւնը մտցնելի: Սաղաստա յայտնեց, որ այդ վերանորոգութիւնը մտցրած լինելով կաթօլիկ ուրիշ շատ երկիրներում, անկարելի է յետաձգել: Բացի այդ քաղաքական ամուսնութիւնը մտցնելու յետոյ էլ կաթօլիկներին իրաւունք է տրվում ընտրութիւն անել քաղաքական և եկեղեցական ամուսնութեան մէջ: Նրբու տեսակ ամուսնութիւնն էլ միատեսակ օրինաւոր այս երանան: Նուիրակը պատասխանեց, որ քաղաքական ամուսնութիւնը ընտրամարդութեան կրահադիպել կաթօլիկներին, եկեղեցականներին և սեփական կողմից:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՀԻՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵՆԻՑ

ՄՅԻԼԷՍԻ, 26 մարտի: Հարուստ և մոտեան երկաթուղիների բոլոր դժերի վրա երթեկուցութիւնը նորից սկսված է:

ԵԱՍՏԱ, 26 մարտի: Եղանակը պարզվեցաւ. ստուերի տակ 13% է: Հիւանդները ամբողջ օրը բաց օդին տակ են: Կուսակցութիւնը ապրիլին 1-ին կը սկսվի:

ԳԱՆՅԻՎ, 26 մարտի: Վիսլա գետը ընդունի մօտ դուրս եկաւ ավերից և ողորկ շրջակայ գիւղերը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 մարտի: Մարտի 30-ին ուղարկվում են Մօսկվա արքունական նշանները: Արտասահմանի անցադիմելից վերցնելի հարկի մասին լրագիրները հաղորդում են որ բժշկվելու համար արտասահման ուղարկուող մասնաւոր անձինք ազատ կը լինեն այդ հարկի վճարելուց միայն այն ժամանակ, երբ նահանգական վարչութիւնները բժշկական բաժինները կը վկայեն ծանօտ հիւանդութեան մասին:

ՄԱՍԿՈՎ, 26 մարտի: Անցեալ զիշեր արքունական պալատի այգիին մէջ ձայնակետադաշտ: Վնասը անշան է: Արիօսի մի անձն է կալանաւորված, որ «Ա ձեռքը ընկերութեան տուժնորդ է համարվում:

ԲՈՍՏՈՎ (Գօնի վրա), 26 մարտի: Այս տեղ կանգնած են 20 նաւեր, որոնք բեռնաւորված են 2,000 չեպերտ հացով իրաքսնչիւրը: Նրանք սպասում են օտար շոգենաւերին: Յորենահատիկները ընդհանուր քանակութիւնը հասնում է 2½ միլիոն պուլի: Վերին գիւղերին մէջ շատ հաց կը որ Բոստով պէտք է բերվի:

ԿՐԵՄԵՆՉՈՒԳ, 26 մարտի: Գնէպը գետը շարժվեցաւ:

ՅԱՐԻՑԻՆ, 26 մարտի: Վօլգա գետը շարժվեցաւ:

ՕՐԵՆԲՈՒՐԳ, 26 մարտի: Սակմա և լակ գետերը—մաքրվեցան սառուցից:

ԲԵՐԼԻՆ, 26 մարտի: Իշխան Բլաուրի «Nordd. Allg. Zeitg.» լրագրատու է անուանում այն լուրը, իբրեւ գերմանիայի, Աւստրո-Ունգարիայի և Իտալիայի դաշնակցութիւնը ուղղված է Ֆրանսիայի դէմ, քանի որ հանրապետութիւն չէ ձգտում պատերազմական նպատակներ Միացեալ Խորհուրդը շուտով կը դբար հացի մաքսահարկը բարձրացնելու հարցով:

ԼՕՆԳՈՆ, 26 մարտի: Գետերայ Ուօլգա և լորդ Կլան-Վիլիամ ուղեւորվում են Մօսկվա իբրեւ անգլիական դրբերի և նաւատարմի ներկայացուցիչներ թագադրութեան մասնակ: Պոլիցիային տեղեկութիւն է տուել որ Լիվերպուլից Լօնդօն դարձեալ ուղարկված է դիւնամիտ: Այստեղ զանվեցաւ ժողովայն մեքենայ: Մանչեստրի մէջ քաղաքները սպառնում են ձայնեցնել զարկային խորհուրդարանը:

Խաղաղի—հրատարակող ԳԻՐԳՐ ԱՐԾՐՈՒՆԻ

